# Հասարակական կազմակերպության պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

| **Կազմակերպական-իրավական տեսակը** | **«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք** | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի** | **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** |
|---|---|---|---|
| Հասարակական կազմակերպություն | «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով հասարակական կազմակերպության պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չէ | Հասարակական կազմակերպության պետական գրանցումը մերժելու հիմքերն են՝<br>**1.** հասարակական կազմակերպության կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը.<br>(*մասնավորապես՝* ***«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝***<br>*1) Կազմակերպությունը կարող է ստեղծվել նոր կազմակերպության հիմնադրման կամ օրենքով սահմանված կարգով՝ գոյություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման միջոցով:*<br>***(10-րդ հոդվածի 1-ին մաս)***<br>*2) Կազմակերպություն կարող է հիմնադրել առնվազն երկու անձ՝ ֆիզիկական անձ և (կամ) իրավաբանական անձ:*<br>***(10-րդ հոդվածի 3-րդ մաս)***<br>*3) Կազմակերպություն չեն կարող հիմնադրել կամ դրա անդամ չեն կարող լինել կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, ինչպես նաև օրենքով Կազմակերպություն հիմնելու կամ նրա անդամ դառնալու իրավասություն չունեցող իրավաբանական անձինք:*<br>***(10-րդ հոդվածի 4-րդ մաս)***)<br>**2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը.<br>*(մասնավորապես՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր չներկայացնելը)* | Եթե հասարակական կազմակերպության անվանումը ցույց չի պարունակում հասարակական կազմակերպության գործունեության բնույթի մասին:<br>(58-րդ հոդված 1-ին մաս) |

| | | | |
|---|---|---|---|
| | | **3.** ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին.<br>*(մասնավորապես`<br>«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն.<br>1) Կազմակերպության անվանումը պետք է հայերենով պարունակի տարբերակող նշանակության հատուկ կամ հասարակ անուն, ինչպես նաև «հասարակական կազմակերպություն» բառերը:*<br>***(6-րդ հոդվածի 2-րդ մաս)***<br>*2) Եթե օրենքով նախատեսված է բառեր և անվանումներ օգտագործելու համար արտոնագրի, թույլտվության կամ այլ հիմքերի առկայություն, ապա կազմակերպության անվանումը կամ կրճատ անվանումը (անվանման հապավումը) կարող է այդպիսի բառեր և անվանումներ պարունակել արտոնագրի, թույլտվության կամ այլ հիմքերի առկայության դեպքում:*<br>***(6-րդ հոդվածի 4-րդ մաս)***<br>*3) Արգելվում է կազմակերպության այնպիսի անվանման, կրճատ անվանման (անվանման հապավումը) կամ խորհրդանիշի օգտագործում, որը նույնական է այլ հասարակական կազմակերպության, ներառյալ` գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված իրավաբանական անձանց անվանումներին, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներին և խորհրդանիշներին:*<br>***(6-րդ հոդվածի 5-րդ մաս)***<br>*4) Արգելվում է Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության խորհրդանիշների օգտագործումը որպես Կազմակերպության խորհրդանիշ կամ խորհրդանիշի մաս:*<br>***(6-րդ հոդվածի 6-րդ մաս)****)* կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին.<br>**4.** անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում:<br>(36-րդ հոդված 1-ին մաս)<br>*(մասնավորապես`<br>1) ոչ առևտրային կազմակերպության անվանման գրանցումն իրականացվում է կազմակերպության* | |

| | | | |
|---|---|---|---|
| | | *գրանցման հետմիաժամանակ: (32.1 հոդվածի 1-ին մաս)*<br>*2) Կազմակերպության անվանման գրանցումը մերժվում է, եթե դրա տարբերակող նշանակությունունեցող անունը՝*<br>*ա) նույնական է սահմանված կարգով գրանցված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը.*<br>*բ) նույնական է Կազմակերպության գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը (անվանման հապավմանը).*<br>*գ) պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին: (32.1 հոդվածի 6-րդ մաս)* | |

## Հասարակական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

| **Կազմակերպական-իրավական տեսակը** | **«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք** | **«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի** |
|---|---|---|
| Հասարակական կազմակերպություն | «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով հասարակական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չէ | Հասարակական կազմակերպության փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմքերն են՝<br>**1.** հասարակական կազմակերպության փոփոխությունների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը. (*մասնավորապես՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով կամ կանոնադրությամբ նախատեսված պայմանների խախտումը)*<br>**2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ հասարակական կազմակերպության ներկայացրած այլ փաստաթղթերին. *(մասնավորապես՝ Արձանագրությունը պետք է բովանդակի տեղեկություններ՝*<br>*1) Նիստի գումարման օրվա և վայրի մասին.*<br>*2) Արձանագրության կազմման օրվա մասին.*<br>*3) Նիստի աշխատանքներին մասնակցելու իրավունքունեցող* |

| | | |
|---|---|---|
| | | *անձանց (այդ թվում՝ ձայնի իրավունք ունեցողների) մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).*<br>*4) նիստի աշխատանքներին մասնակցած անձանց մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).*<br>*5) նիստի օրակարգը.*<br>*6) քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները.*<br>*7) այլ տեղեկություններ, եթե այդպիսի պահանջ սահմանված է առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով, այլ օրենքներով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:): (17-րդ հոդվածի 6-րդ մաս)*<br>**3.** առկա է հասարակական կազմակերպության փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ: (43-րդ հոդված) |